



Քաղաքներու մէջ զարգացան արհեստներն ու մետաղագործութիւնը:



Ուրարտուի թագաւորները յատկապէս զարկ տուին ճարտարապետութեանը: Շինեցին ամրոցներ եւ բերդաքաղաքներ:

Անոնք հիմնադրած են քաղաքներ՝ Վանը, Կիւմրիս, Արմաւիրը, Կարսը, Գառնիս, Մուշը եւ ո՛վ գիտէ, քաղաքամայր Երեւանն ալ արդէօք Ուրարտուի թագաւորներէն մէկուն ձեռակերտը չէ՞ր...

Ուրարտուն հայկական բարձրաւանդակի առաջին մեծ պետութիւնն է: Ուրարտուի առաջին թագաւորներէն մէկն էր Արամէն: Ան իր պետութեան մայրաքաղաքը դարձուց Վանի բերդը, որ այն ատեն Տուշպա կամ Տոսպ կը կոչուէր: Արամի յաջորդները պետութիւնը կանգուն պահելու համար շուրջ երեք հարիւր տարի պատերազմներ մղեցին հզօր Ասորեստանի դէմ ու շատ անգամ յաղթող հանդիսացան:

Ուրարտուի թագաւորները զարգացուցին իրենց երկիրը եւ բարձր քաղաքակրթութիւն ստեղծեցին: Գիւղատնտեսութեան մէջ ցանքի տարածութիւնները ընդլայնեցին, ոռոգումի համար ջրանցքներ բացին, այգիներ տնկեցին, իսկ լեռնային շրջաններու մէջ քաջալերեցին անասնապահութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒՐԱՐՏՈՒ



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՅՑ՝ ՈՒՐԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՈՒՐԵԱՆ ՆԿԱՐԱՇԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՇԵԱՆ

Ո՛Վ ԷՐ ՄԱՐՔՕ ՓՈԼՕՍ



Մարքո Փոլոս իտալացի վաճառականի մը որդին էր:

Ան ապրեցաւ եւ աշխատեցաւ Չինաստանի կայսեր մօտ, 17 տարի: Իր հայրենի երկիրը վերադարձին՝ ան մեծ գիրքի մը մէջ արձանագրեց Արեւելքի մէջ իր բոլոր տեսածներն ու սորվածները:

1254-ին ծնած Մարքո Փոլոս իտալիոյ Վենետիկ քաղաքը կը ձգէ 1271-ին: Չորս տարի ետք ան կը հասնի Քապալուլ (Ներկայիս՝ Փեքին), Չինաստանի վրայ կ'իշխէր Քուալայ Խան: Այս վերջինը Մարքո Փոլոսին կը յանձնէ տարբեր տեսակի պաշտօններ: Ապա Մարքո Փոլոս Եւրոպա կը վերադառնայ 1295-ին: Երկու տարուան ընթացքին ան կը գրէ «Աշխարհի Յրաշալիքներու Գիրքը» գործը, ուր ան կը պատմէ իր արկածախնդրութիւններուն եւ այցելած երկիրներու սովորութիւններուն մասին, որոնց հանդիպած է Արեւելքի մէջ: Ան կը մահանայ 1324 թուականին:

Ո՛Վ Է ՈՒՒՆԻ ԱՐՋՈՒԿԸ



Մեր բոլորին ծանօթ է Ուիւնի արջուկը:

Այս պատմութիւններու կերպարը 1926-Էն ի վեր մանուկները երազել կու տայ իր արկածախնդրութիւններով:

Սակայն գիտե՞ք, թէ այս արջուկը իսկապէս գոյութիւն ունեցած է:

Ուիւնի արջուկին եւ անոր արկածախնդրութիւններուն հեղինակը, Ալէն Ալէքսանտր Միլն, այս կերպարին անունը դրած է Ներքընչուելով այն արջէն, որուն ինք յաճախ կ'այցելէր իր տղուն հետ, Լոնտոնի կենդանաբանական պարտեզին մէջ:

Այս արջը ծագումով Բանատայէն էր եւ անոր անունն էր «Ուիւնի Փէկ»: Այս անունը անոր տուած էր անասունը ընտելացնող անասնաբոյժը՝ Յերի Զոլպըրին: Բանատական այս քաղաքը՝ «Ուիւնի Փէկ»ը անոր ծննդավայրն էր:



Կետերը իրարու միացուր՝ յայտնաբերելու համար պահուած պատկերները, ապա իւրաքանչիւր կերպարի վերադարձուր անոր ոտքերը:

Ներկէ՛ մէկ կետ պարունակող բաժինները՝ գտնելու համար պահուած պատկերը:

Սիրելի՛ «Կկու»ի ընթերցասէր բարեկամներ
 Կը մօտենան տարուան ամենէն սիրուած եւ սպասուած տօները՝ Կաղանդը եւ Ս. Ծնունդը:
 Մեծ եւ փոքր կը պատրաստուինք եւ խանդավառութեամբ կը սպասենք այդ օրերուն, որպէսզի մեր ընտանիքին եւ բարեկամներուն հետ տօնական սեղանին շուրջ նստինք, ու տենք, խմենք, Կաղանդ Պապային նուէրները բանանք եւ հաճելի ժամանակ անցընենք:
 Սակայն, չմոռնանք Կաղանդ Պապային նամակ գրելը եւ ձեր նախընտրած նուէրը խնդրելը: Անկասկած, որ Կաղանդ Պապան հաճոյքով կը կարդայ ձեր նամակները եւ կ'իրականացնէ ձեր խնդրանքները:
 Ուրեմն, օ՛ն, լծուեցէ՛ք աշխատանքի:
 Գեղեցիկ գիրով նամակ մը գրեցէ՛ք Կաղանդ Պապային եւ ուղարկեցէ՛ք «Գանձասար» շաբաթաթերթի խմբագրատուն, մինչեւ 15 Նոյեմբեր 2019, որպէսզի «Կկու»ն ալ իր կարգին այս նամակները հասցնէ Կաղանդ Պապային:
Սիրով՝ «Կկու»

ՈՍԿԻԻ ԿԱՐԱՍԸ

Յովհաննես Թումանյան



- Տէ՛ր արքայ,- կ'ըսեն իմաստունները,- եթէ չես բարկանար՝ ըսենք ուրեմն ատոր նշանակութիւնը. կարասով ոսկին աղքատ հողագործներուն դրկուած է որպէս պարգէւ՝ իրենց պարկեշտ աշխատանքին եւ ազնուութեան: Եթէ անոնք առնել ուզեն, իրենց արդար վարձատրութիւնն է որ պիտի առնեն. իսկ երբ դուն ձեռք կ'երկարես, ուրիշին բախտն է որ յափշտակած կ'ըլլաս: Յետեւաբար, ոսկիի տեղ օձ կը գտնես:

Թագաւորը շատ կը ցնցուի, խօսք չի գտներ պատասխանելու: Վերջապէս՝

- Լա՛ւ,- կ'ըսէ խօսակցութիւնը փոխելու համար,- ուրեմն հիմա որոշեցէք, թէ այս երկուքէն որո՛ն կը պատկանի գտնուած ոսկին:

- Անշո՛ւշտ հողին տիրոջը,- կը ձայնէ վարձակալ գիւղացին:

- Ո՛չ, հողը հերկողի՛ն,- կը միջամտէ հողատերը, եւ նորէն կը սկսին կռուիլ իրարու հետ:

- Է՛, կը բաւէ, լռեցէ՛ք,- կը հրամայեն իմաստունները,- ի՞նչ զաւակ ունիք դուք, մա՞նչ թէ աղջիկ...

Յայտնի կ'ըլլայ որ մէկը մանչ մը ունի, միւսն ալ՝ աղջիկ մը: Այն ատեն իմաստունները կ'որոշեն որ անոնք իրենց աղջիկն ու տղան իրարու հետ ամուսնացնեն, գտնուած ոսկիներն ալ տան անոնց: Բարի մարդիկը կը ձգեն վեճն ու կռիւը, կը համաձայնին այս կարգադրութեան եւ կը պատրաստուին հարսանեկան ուրախութեան:

Եօթը օր, եօթը գիշեր հասարնիք կ'ընեն, եւ իրենց ազնուութեան ու արդար աշխատանքին պարգելը եղող կարասով ոսկին ալ կը նուիրեն իրենց զաւակներուն:

Բարիքը մեզի հետ ըլլայ միշտ, չարիքն ալ՝ այն ազահ թագաւորին:

(Վերջ)



ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ



Շերեփուկները գորտերու ձագերն են

Գորտերը երկկենցաղ կենդանիներ են, այսինքն երկու ապրելակերպ ունին: Բնութեան մէջ քանի մը հազար տեսակ գորտեր կան: Գորտերու մատներուն միջեւ կան թաղանթներ (մաշկեր), որոնց շնորհիւ այդ էակները կրնան դիրաւ լողալ:

Գարնան անոնք հաւկիթներ կ'ածեն, որոշ ժամանակ անց անոնց մէջէն դուրս կու գան շերեփուկները: Արտաքնապէս այդ շերեփուկները չեն նմանիր հասուն գորտերուն, այլ աւելի նման են ձկնիկներու:

Շերեփուկները ջուրին մէջ կ'ապրին եւ ձուկերու նման խռիկներով կը շնչեն: Անոնք կ'ունենան փոքրիկ պոչեր, որոնք հետզհետէ կը կարճնան ու կ'անհետանան:

Արդեօք միայն թռչունները հաւկիթ կ'ածեն

Բոլորս գիտենք, որ փետուրաւորներու ձագերը հաւկիթն դուրս կու գան: Կաթնատուններու ձագերը ամբողջութեամբ ձեւաւորուած կը ծնին: Թէեւ ոմանք մերկ ու կոյր կը ծնին, իսկ ուրիշներ կը տեսնեն եւ իրենց մարմինին բուրդով ծածկուած կ'ըլլան: Սակայն Աւստրալիոյ մէջ գարմանալի գազանիկներ կը բնակին՝ բաղակտուցներ ու եքիդաններ: Անոնք թռչուններու նման հաւկիթ կ'ածեն, բայց ոչ բոյնի՝ այլ ջուրի տակ եղող որջերու մէջ:

Մանկապարտեզ գազանիկներու համար

Գիտե՞ք թէ, կարգ մը կենդանիներու ձագերը մեր երեխաներուն նման մանկապարտեզ կը յաճախեն: Օրինակ ծովառիւծներուն կամ ծովարջերուն ձագերը, որոնք ձուկերով կը սնանին: Այդ պատճառով չափահաս կենդանիները երբեմն ծովուն մէջ ձկնորսութիւն կ'ընեն: Դեռ լողալ չգիտցող իրենց փոքրիկները «մանկապարտեզ» կը դրկեն, ուր երբեմն կը հաւաքուին հարիւրաւոր սանիկներ: Անոնք կը հետեւին քանի մը չափահաս էգեր: Երբ մայրերը կը վերադառնան իրենց ձագերը կը գտնեն հոտով ու ձայնով: Նման «մանկապարտեզ» ունին նաեւ ուրիշ կենդանիներ՝ թեւատները, փիղերը եւ ընձուղտները:

Ե՞րբ ապրած են մամուլները

Գիտնականներու կարծիքով այս նախադարեան կենդանիները երկրագունդի վրայ ապրած են աւելի քան 5 միլիոն տարի առաջ: Արտաքնապէս անոնք կը նմանէին փիղերու, միայն այն տարբերութեամբ, որ մամուլներուն մարմինը ծածկուած էր հաստ ու երկար բուրդով: Անոնք զոյգ մը հսկայ թեք ժանիքներ ունէին իրենց դէմքին վրայ, որոնց միջոցով այս կենդանիները ձմրան ձիւնին տակէն կրնային կեր ապահովել: Չափահաս մամուլները 5 մէթրէն աւելի բարձրութիւն ունեցած են: Անոնք բնակած են Հիւսիսային Ամերիկայի, Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի մէջ:

